ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆ

Ո՞ՐՆ Է ԴՐԱԽՏԸ,– վայրն երանավետ,
Ուր պիտի ապրեմ գերեզմանից ետ.
Մի՞թե մարդկային տառապած կյանքը
Ձըստեղծեց այն սուտ մխիթարանքը.
Եվ մի՞թե նորա մահից սարսափած
Ագահությունը չէ իրան խաբած...
Սակայն բարի է.– մի տանջված արդար,
Կամ իրան արդար համարող մի չար
Երկրային կյանքի վերջին վայրկյանին
Հանգիստ ու խաղաղ կավանդե հոգին,
Համաձայն իրան ճաշակի, կամքի,
Վայելքն հիշելով խոստացյալ կյանքի.
Եվ ահա միակ, բայց մեծ օգուտը,
Որ մարդկությանը տվեց այս սուտը։
Ահա է մեր կյանքը.– լոկ խաբեություն.
Ո՜հ, մի՞թե և ես, ինչպես մի հնչյուն,
Այս իմ հույսերիս, ձգտումներիս հետ
Պիտի մեռանիմ, չքանամ անհետ...
Չէ՛, սիրելի է խոստումն երկնքի –
Հույսն հավերժական, անվախճան կյանքի.
Հեռո՛ւ ինձանից հոգեմաշ կասկած,
Ողջույն քեզ, ողջո՛ւյն, ո՛վ կյանքի Աստված.
Արի՛, հայտնվի՛ր, նշկահիր մահու
Տարակուսանաց տագնապն ահարկու
Եվ կույր հավատով զորացրու հոգիս –
Անմահություն տուր լքացած կյանքիս...
Բայց ինչպես պիտի կյանք առնեմ կրկին,
Արդյոք լուսակազմ, աննյութ, անմարմին
Պիտի սավառնեմ անծայր եթերքում,
Թե՞ իբրև մի հունչ շրջեմ աշխարքում,

Թե՞ անփույթ, անգործ թափառեմ պիտի
Մարդոց աչքերին անտեսանելի,
Թե՞ ամպերի մեջ պիտի ես հանգչեմ
Եվ ոտքիս տակից կայծակներ իջնեն...
35 Օ՜, ներիր, Աստված՝ ծածկագետ, անհուն,
Ներիր մեծամիտ, գոռոզ պատանուն.
Աննշան ճճիս չարաչար մեղա,–
Հանդուգն խորհրդով խորամուխ եղա,
Զգտեցի պարզել քո աստվածային
40 Անհասանելի, անմեկին գաղտնին։